

1410

Կ Ա Ղ Ա Ն Դ

Կ Ս Մ

ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Կրթութիւններ, Մանկավարժական  
Երգեր, Պատմութիւններ,  
Գիտական գրութեանքներ,  
Հանելուկներ, Ե.այլն:



Կ. ՊՕԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ

ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

1894

207



ՆՈՒԷՐ ՅԻՇԱՏԱԿԻ

ՎԱՂԱՄԵՌԻԿՆ

ԱՐՄԻՆԷ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԴՈՒՍՏՐ

ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ

ԳԷՈՐԳ ԷՑ. ԶԱՐԴԱՐԵԱՆԻ

Ծնեալ 1878 Նոյեմբեր 15.

Վախճանեալ 1886 Ապրիլ 22

ՀՐԱՏԱՐԱԿՁԷՆ

LEDIYE  
ՀԱՅԿԱՅԻՆ

1410

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԱՐՄԻՆԷՒ ՀԱՄԱՐ

Տպարանապետ եւ Թղթավաճառ  
Գէորգ Էֆ. Զարդարեանի դուստրն էր  
Արմինէ, որ հազիւ ութամեայ Թռաւ  
յերկինս ի շարս հրեշտակաց :

Փոքրիկ ընթերցողներ եւ ընթեր-  
ցողուհիներ՝ իւր կեանքն ձեզի օրինակ  
Թող լինի, աշխատասէր, ծնողաց հնա-  
զանդ էր, կը յարգէր իրմէ մեծերն,  
ու երբ մեռաւ, ամեն ոք լացաւ և ող-  
բաց, եւ ձգեց անուշիկ անուռն մը որ  
կը կոչուի յիշատակ. դուք ալ աշխա-  
տեցէք այդ աղջկան օրինակին հետե-  
ւի՝ որով աշխարհի մէջ ամեն ոք ձեզ  
պիտի սիրէ, երջանիկ պիտի լինիք եւ  
զեղեցիկ անուռն մը պիտի Թողուք :

Կ Ա Ղ Ա Ն Դ

ԿԱՄ

ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Խրատներ, Մանկավարժական երգեր, Պատմութիւններ, Գիտական գրօսանքներ, Հանելուկներ, Եւայլն:



Կ. ՊՕԼԻՍ

Տպագր. Ճիվէյիկեան

ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ




## ՊԱՊՆ ՈՒ ԹՈՒՆԵՐԸ

Թեւին տակ իւր ձաղերը  
Ժողովրատղ հաւու մը պէս,  
Մերուկ պապն իւր թոռները  
Քովիկն առած պաղնէր զերես:

Ու կարդալով մէկիկ մէկիկ  
Այսպէս նրւէր Մանկանց գրքիկ,  
Պատկերները ցոյց տալով  
Կը թացատրէր գորովով:

Թոռնիկներն իրենց պապուն  
Երբ լսեցին խրատներուն,  
Անդին խօսքեր, ամէնքն իսկոյն  
Կը պաղնէին ձեռքը պապուն:

Յարգեցէք, մանկիկներ,  
Ձեր պապն ու մամեր,  
Որոց թեւին տակ  
Կ'ըլլաք լաւ զաւակ:







## ԿԱՂԱՆԴ

Տարեզլխուն գիշերը  
Տան մէջ կայ իրադանցում,  
Տղաքներուն գրպանը  
Միրգերով է լեփ լեցուն:

Մրգեղինաց սեղան մը  
Սենեակին մէջ կը շտկեն,  
Դեղին ու ճերմակ մոմեր  
Անոր շուրջը փակցնեն,

«Զգուշութեամբ, աղանքներ,»  
Զայնէ մայրըն պաշտելի,  
«Որպէս զի տակնու վրայ  
Զընէք սեղանն Կաղանդի»:


«Մենք հաց չուտենք այս գիշեր,  
Գոչեն, մայրիկ, փոկեղ բեր,  
Բայց փոկեղէն աւելի  
Սիրենք խուշեր, խումրիներ»»

Մէյ մ'ալ դուռը դարնուի  
«Հայրիկն է» ձայնը լսուի,  
Միահամուռ վայր վազեն,  
Խանդով ձեռքը կը պագնեն:

Ու երբ սենեակը ելլեն,  
Տղայք մօմերը վառեն,  
Եւ սեղանին միրգերէն  
Հայրիկին հրամցունեն:

Հայրն պարսպէ ախորժով  
Անոյշ գինին, որ տայ խանդ,  
Ու կը մազթէ շնորհաւոր  
Նոր եւ բարի մեծ կաղանդ:






## ԱՐԵՒ

Պայծառ ոսկի դու արեւ,  
 Սիրով տամ քեզ միշտ բարեւ,  
 Ճոխն ու աղքատ քեզ բաղձան  
 Ձի տաք օրերդ արդ անցան:

Ինչո՞ւ երբեմն, ո՛հ, ծածկես  
 Դեմքդ ուրախ, վարսիցդ դէս,  
 Մեր կեանքն ես դու ջինջ արեւ,  
 Բընութեան տէրն արդարեւ:

Իու մեզ բերես պայծառ տիւ  
 Քեւ կը հաշուին ամաց թիւ,  
 Թող սէրդ լինի մեզ անհուն  
 Եւ միշտ օրհնեմք քոյ անուն:



## ԿՈՎՆ ՈՒ ՀՈՐԹՈՒԿԸ

Տե՛ս, հորթուկ սիրուն,  
Աշխոյժ ու կայտառ,  
Խընդրէ օրն ՚ի բուն  
Իւր մայրն անդադար,  
Բնական սէրն է  
Իրեն առաջնորդ,

Երբ մայրը տեսնէ՝  
Խայտայ ՚ի դղորդ ,  
Եւ սիրոյ ձայնիւ  
Աքին տնկած վեր՝  
Միշտ ըմպօ՛ , ըմպօ՛  
Պօռայ անհամբեր ,  
Մայրն որ մօտենայ ,  
Հորթ ուկը սիրուն  
Ըմպօն կըրկնելով  
Վազէ քովն երթայ ,  
Ու բերանն առած  
Անոր ըտինքը ,  
Մառչ մառչ կուլ կուտայ  
Անուշիկ կաթը :  
Մայրն ալ գորովով  
Հորթ ուկը սիրէ ,  
Ու իբր համբոյր՝  
Հոտու ըտայ , լիզէ :  
Ո՛հ , ի՛նչ գեղեցիկ  
Եւ ի՛նչ երջանիկ ,  
Մօրն ու որդեկան  
Գգուանք դիեցիկ :



## ՀԱՒՆ ՈՒ ՉՍԴԵՐԸ

Կը՛տ, կը՛տ, կը՛տ, կը՛տ, կի՛տ ձայ-  
նելով

Հաւը ժողովէ ձագերն իր քով,

Եւ ուտելու կը յորդորէ

Գրտած հատերն ցուցընելով:

Իսկ անոնք որ իրեն ձայնին

Սկանջ չտան, հոս հոն փախչին:

Կը զրկըվին ուտելիքէն,

Մեղքը կըլայ իրենց վիզին:

Այսպէս, երբոր աղաքները

Չեն հնազանդ իրենց մօրը,

Անոր սէրէն կը զրկըվին,

Ու փորձանքի կը հանդիպին:



## ԱՅԾԸ

Մազոտ ու մօրուօք  
 Մա այծը հպարտ  
 Ցատկէր ցատկուտէր  
 Լեռ , ցոր , սար ու դաշտ :  
 Կոտոշն ու մօրուքը  
 Յաճախ կը շարժէր ,  
 Տոտիկներովը  
 Գետինը ծեծէր :  
 Փոքրիկ ուլերը  
 Իրեն կանչելով,  
 Ծառոց ճիւղերը  
 Անոնց ցուցընէր :

Բայց երբ իր հօտէն  
 Դուրս այժմը տեսնէր՝  
 Կոտորչ կոտորչի  
 Զարնելով կռուէր :  
 Մինչեւ որ հովիւն  
 Քար վրայ հասնէր ,  
 Ոտքերնէն քաշէր ,  
 Իրարմէ զատէր :

Ով որ այժին պէս  
 Անառակ կըլլայ ,  
 Իրեն մեծերէն  
 Պատիժ կը գտնայ :







## ԿՍՏՈՒ

Ամէն տուն իր  
 կատուն ունի,  
 Որ մուկերուն  
 է թշնամի:


Երբոր կատուն  
 Մեղմիւ շոյենք  
 Անոր հաճոյք  
 կը պատճառենք:



«Բօ՛ն , րօ՛ն» ճայնէ ,  
 Ձեռք կը լիղէ ,  
 Խոնարհութեան  
 Շարժում կ'ընէ :  
 Բայց երբ անոր  
 Պոչէն քաշենք ,  
 Անմիջապէս  
 Կատղեցունենք ,



Մեզ կը ճանկէ  
 Կամ կը խաժնէ ,  
 Մռլա՛ւ , պուայ ,  
 Փախչի , կծկէ՛ :



ՓԻՂ ԵՒ ՇՆԻԿ

Փիղ մը յանկարծ կանցնէր  
ճամբէն

Աշխարհն հայէր մարմրելէն.

Քանզի ունէր շատ խոշոր հասակ  
Ամենուն ալ զարմանք էր տրւած:



Քոթոտ մը՝ այն է մէկ շընիկ,  
Կը հաջէր անքան խիստ սաստիկ,  
Կարծելով թէ պիտի տայ փրղին  
Իւր հաջիւնովը երկիւղ ահագին:

«Քա լակոտ շուն, ի՞նչ է քո  
հաջիւն»



Նայիս անդիէն աքլոր մը սիրուն  
Առ այն ջընիկ ձայներ, «չաներեա,  
Հաջիւնդ փղին հո՞գն է կարծեա.  
Հասակիդ նայէ՛  
Յետոյ ոյժդ փորձէ:»

Ով որ իր չափէն աւելի խօսի,  
Փառաւորապէս կը խայտառակվի



## ԿԱԹՆՏՈՒ ԿՈՎԸ

Ո՛հ, ո՞վ չի սիրեր  
 Սա կովըն հեզիկ,  
 Որ երբ տէրն ուզէ՝  
 Կենայ հանդարտիկ:


Իրեն սընուցիչ  
 Կաթը տայ սիրով,  
 Զոր մենք ամեն օր  
 Խմենք ախորժով:

Կաթը ծեծելով՝  
 Կարագ կը շինեն,  
 Ու հացին վրայ  
 Քսելով կ'ուտեն:

Մակարդելով կաթն  
 Պանիր կը շինուի,  
 Որ մեզ պատրաստի  
 Ուտելիք լինի:

Ո՛հ, ո՞վ չի սիրեր  
 Սա կովը հեզիկ,  
 Որուն կաթէն մենք  
 Այնչափ կ'օգտըւինք:







## ԹՌՈՒՑԻԿԸ

Ծոյլն Արմենակ,  
 վահան ու Սմբատ,  
 Դուրս կ'երնէն տունէն  
 Լուր օր մը, շաբաթ.  
 «Ինչ ընենք, կրսեն,  
 Երթանք վարժարան,  
 Քիչ մ'ալ գրօնունք  
 Դուրսն քաղքի դրան :»  
 Թռուցիկն առնեն  
 Ու վաղեն դաշտ լեռ,  
 Հոն տեանեն գառներ  
 Եւ աշխոյժ ու լեր.  
 Որ հովուին մօտիկ,  
 Անփոյթ եւ աղատ  
 Արածին իւրեանց  
 Մարց հետ հարազատ :  
 Հոգնած կը նստին  
 Մեծ ծառի մը տակ,  
 Ոյր վերայ թռչունք

Երգեն Տինջ օրն տաք .  
 «Էհ, չը նախանձի՞նք ,  
 Կրսեն դոցա կեանք ,  
 «Մինչ մենք յարածամ  
 Մաշեմք սիրտ ու գանկ .

Տե՛ս հովիւն ահա  
 Հանգիստ կեանք վարէ ,  
 Իսկ մեր աշխատանքն ,  
 Ո՛հ , ամեն օր է ,  
 Ելնենք զքօսանք ,  
 Ահա թըռուցիկ ,  
 Քիչ մ'ալ վայելենք  
 Այս օրն վաղանցիկ .»

Զայս ըսելէ վերջն  
 վաղեն վազվղեն ,  
 Թռուցիկով խաղալ  
 Կրսեն չունի դէն .  
 Այլ ես կրսեմ թէ՛  
 Զքօսանքն անոյշ  
 Լինի այն ատեն՝  
 Երբ աշխատինք յոյժ .

Չուանց ցատկողները հե-  
տեւեալ խրատին աղէկ ու-  
շաղքու թիւն ընելու են .

Արմինէ՛ ,

Յատկրտան աքլօրի պէս  
ինչո՞ւ կը խաղաս այդ պէս ,  
Չգիտե՞ս որ այդ դրօսանք  
Քեզ կը բերէ նոր փորձանք :

Կը հիննանք քու կոշիկներ ,  
Կը թափես շատ քրտիքներ ,  
Եւ որ մը կը հիւրնդ նաս ,  
Ծնողացդ փորձանք կ'ըլլաս :





## ՇՆԻԿԸ

Սա քոթսան որ թօմպուլիկ  
 է ու նստած դրան մօտիկ,  
 Պտույ, կանչէ, կ'իմացունէ  
 Երբ օտար մը գանձն մանէ:

Թէև խօսիլ չի կարենայ,  
 Բայց ամէն բան լաւ հասկընայ.  
 Տան կատուին հետ է միշտ հաշտ,  
 Իսկ օտարին՝ անգուլթ, անհաշտ:

۵۸۸۸۵



ՓՈՒՔԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ



Մենք երաժիշտներ ենք,  
 Հաւ նուագարաններ կրնանք չա-  
 լել.  
 Ունինք ջութակ, սրինգ դաշ-  
 նամուր,  
 Թմբուկ ծնծղա եւ դաշնակ.  
 Զոր օրինակ, դոր օրինակ.  
 Ահա այսպէս մենք կը չալենք,  
 ճրգըր, ճրգըր, ճրգ, ճրգ,  
 ճրգըր, ճրգըր. ճրգ, ճրգ,  
 Ա՛յ, ա՛յ, ա՛յ, այսպէս մենք կը  
 չալենք.  
 Մենք երաժեշտներ ենք,

Լաւ նուագարաններ կրնանք  
 չալել,  
 Ունինք ջութակ, օրինոգ դաշ-  
 նամուր,  
 Թմբուկ ծնծղա եւ դաշնակ.

Զոր օրինակ, զոր օրինակ,  
 Ահա այսպէս մենք կը չալենք,  
 Տուռու, տուռու, տո՛ւթ, տո՛ւթ,  
 Տուռու, տուռու, տո՛ւթ, տո՛ւթ,  
 Ա՛յ, ա՛յ, ա՛յ, այսպէս մենք կը  
 չալենք.







## ՄԱՅՐՆ ՈՒ ԶԱԿՆԵՐԸ

Զաւակներս մօտեցէք,  
 Ինչ խաղացիք՝ ալ բաւ է .  
 Քիչ մ'ալ քովս ըրէք տիտիկ  
 Խրատ լսելն աղէկ բան է .

— Հա՛ , հա՛ , մայրիկ ,  
 Հա՛ , մայրիկ , սիրուն մայրիկ ,  
 Տո՛ւր մեզի խըրատ ,  
 Մենք կ'ընենք քեզի մտիկ .

Ալ հերի՛ք . շուտ պառկել ,  
 Կանուխ ելլալն աղէկ է ,

Ապա լաւ մաքրըվիլ ,  
Դպրոց երթալ աշխատիլ :

— Չէ' , չէ' մայրիկ ,  
Չէ մայրիկ , սիրուն մայրիկ ,  
Դպրոց չենք երթալ ,  
Մենք ունինք շատ խաղա-  
լիկ :

Թէ դպրոց դուք չեք երթաք  
Խաղալիկը ետ կուտաք .  
Խօսքերս մըտիկ ըրէք ,  
Կանուխէն դպրոց դացէք :

— Հա' , հա' մայրիկ ,  
Հա , մայրիկ , սիրուն մայ-  
րիկ ,  
Մենք դպրոց կ'երթանք  
Տուր մեզի շատ խաղալիկ :



## ԳԵՂՋԿԱԿԱՆՔ

Առտուն կանուխ թէ ելնեմք  
 Քաղցր է վաստակը դաշտին,  
 Զուարթ կ'ըլլամք ու կ'երգեմք  
 Գեղջուկ երգերը մերին:


Անցաւ գիշերը մութ ու սեռաւ  
 Փպտին դաշտերը նորէն,  
 Պայծառ արեւ ծագեցաւ  
 Կանաչ լերանց վերեւէն:

Ելնեմք յաշխոյժ ի մեր երկ,  
 Հրաւէր կարդան թռչնոց երգ,  
 Աշխատութիւնը դաշտին  
 Սիրուն գանձն է աղքատին:

Թէ ճոխն առտուն սթափի  
 Իւր խոկն ունի ու վիշտեր,  
 Բայց այս կեանքը կը նմանի  
 Վերին կեանքին ցանկալի:

Առտուն կանուխ թէ ելնեմք  
 Քաղցր է վաստակը դաշտին,  
 Զուարթ կ'ըլլանք ու կերգեմք  
 Գեղջուկ երգերը մերին:





## ԵՐԿՐԱԳՈՐԾԸ

Ահա ծագեց կարմիր արեւ,  
Տաք եւ պայծառ է օրը.

Դէ քաշեցէք սիրուն եզներ.  
Յառաջ տարէք արօրը.

Վարը վարենք աղօս փորենք,  
Խոր աղօսներ հողին մէջ,

Սերմը ցանենք որ հունձք հնձենք  
Տորեան դիզենք կալի մէջ.

Կուգայ ձմեռ մենք վախ չունինք  
Ուրախ կ'անցնի մեր օրը,

Ուտելու միշտ պաշար ունինք,  
Լի եւ կուշտ է մեր փորը.

Դէ քաշեցէք, սիրուն եզներ,  
Շուտով վարենք արտերը.

Թող չասեն մեր դրացիքը  
Ծոյլ են Հայի եզները:



## ԿՈՇԿԱԿԱՐԸ


Փողոցէ մը օր մը անցայ  
 Պատուհանէ մը ներս նայեցայ,  
 Կոշկահարը ասեղն ատեր  
 Հա՛ կը կարէր, կոշիկ կարէր.  
 Ռարաթաղթիգ, թիգաթաղթիգ,  
 Ահա այսպէս շինէր կոշիկ:  
 Հերիւններով ծակեր բանար

Ներբանի վրայ դէպ վեր դէպ վար  
Ապա փայտէ գամեր գամէր  
Ահա այսպէս զանոնք գամէր.

Ռարաթագթիզ, թիզաթագթիզ,  
Ահա այսպէս շինէր կոշիկ:

Կաղասլարին վրայ շարեր  
Կաշեայ փոքր ու մեծ կտորներ,  
Ու մեծ թելովն ասելն առեր  
Հա կը կարէր, կոշիկ կարէր.

Ռարաթագթիզ, թիզաթագթիզ,  
Ահա այսպէս շինէր կոշիկ:



## ՏՆՏԵՍԻՆ ԵՐԳԸ

Զանգակն կոչեց դասարան ,  
 Դու ք կերթաք ճաշարան ,  
 Հոս շուկայի խոհանոց շէ  
 Եւ ոչ ալ պանդոկ հիւր պա-  
 հելու :

Հոս դպրոց է ուսնելու ,  
 Ուսանողներն կրթելու ,  
 Դու ք անկիրթներ , անպի-  
 տան ,  
 Կ'ուզէք խարազան ,





## ՏՆՏԵՍԻՆ ԵՐԳԸ

Զանգակն կոչեց դասարան ,  
 Դուք կերթաք ճաշարան ,  
 Հոս շուկայի խոհանոց շէ  
 Եւ ոչ ալ պանդոկ հիւր պա-  
 հելու :

Հոս դպրոց է ուսնելու ,  
 Ուսանողներն կրթելու ,  
 Դուք անկիրթներ , անպի-  
 տան ,  
 Կ'ուզէք խարազան ,





## ԳԱՌՆԻԿ ԵՒ ՄԱՅՐԻԿ

Ի՞նչու կուլաս, խեղճ Գառնիկ.  
 — Շատ ձեռ կերայ ես մայրիկ.  
 Քեզ ո՞վ ձեռեց, իմ Գառնիկ,  
 — Կախարդ պառաւ մէկ կնիկ.  
 Ի՞նչու ձեռեց քեզ, Գառնիկ,  
 — Կայի ծառին տակ, մայրիկ.  
 Ի՞նչ ո՞վ ձեռեց քեզ Գառնիկ,  
 — Մէկ մեծ փայտով, իմ մայրիկ.  
 Ո՞ր տեղիդ զարկաւ, իմ Գառնիկ  
 — Թաթիկներուս, սն՛ մայրիկ.  
 Ի՞նչպէս լացիր դու, Գառնիկ,  
 — Մէ՛ մէ՛ մէ՛ մէ՛, իմ մայրիկ.




## ԾԻԾԵՌՆԻԿ

Մարտն անդաւ, հասաւ ապրիլ  
 գեղեցիկ,  
 Հեռու աշխարհէ եկաւ ծիծեռնիկ  
 Բարով դուն եկար, դարնան  
 կարապետ  
 Բոյն շինողներուն ամենէն վար-  
 պետ.  
 Կրօունկը թրաւ, դնաց վերեւէն,  
 Սոխակն ալ փախաւ մեր պար-  
 տէզներէն.

Մէկ դու մնացիր ճնճղուկներու  
 հետ,  
 Սիրուն ծիծեռնիկ, գարնան  
 կարասկետ.  
 Պատուհանիս մօտ շինէ քու բոյնը  
 Անուշ ճռուղով երգէ գարունը,  
 Աճէ՛ ձու, հանէ՛ գեղեցիկ ձաղեր.  
 Մնացիր մեր մօտ մինչեւ Սեպ-  
 տեմբեր.





## ՆԱԻԱԿԸ

Լճին մէջ նաւակը  
 Մեղմ հողմով տատանէր ,  
 Նորա մէջ նստած էր  
 Գեղեցիկ պատանի .  
 Պատանին ձեռքն ունէր  
 Կիթառա , ու երգէր ,  
 Իսկ քամին փախցընէր  
 Նաւակը եղերքէն .

Լճակին մէջը կար  
 Քարաշէն մի ամրոց ,

Իր քրոջ բնակարանն  
 Հանապաղ փակ ու գոց .  
 Պատանեոյ նաւակը  
 Գէտ ամբոց կը վազէր ,  
 Ուր նորա քոյրիկը  
 Ակնապիշ կ'սպասէր :

Մեղմ հովը աւելի  
 Աւելի սաստկացաւ ,  
 Երկինքը մութ պատեց  
 Փոթորիկ բարձրացաւ ,  
 Ալիքի լեռները  
 Գոռալով կը ծփան ,  
 Պատանին աներկիւղ  
 Նուազէր կիթառաւ :





## ՍՆՄԵՂ ՉԲՕՍԱՆՔ

Փոքրիկն Բուրմինէ սո-  
վորու թիւն ունէր ամառ ի-  
րիկուններ վարժարանէն  
սուն վերադարձին պարտէզ  
երթալ եւ օրուելով իւր հը-  
րեշտակային ձայնովը երգել  
հետեւեալը, զոր մայրիկը  
իրեն սորվեցուցած էր,

### Ս.Ռ. ՉԵՓԻԻՌ.Ն

Իու փափկաթեւ մանկիկ գեփիւռ  
Ազբերց վրայէն լուսակարկաջ,  
Անոյշ հոտով ծաղկանց սփիւռ՝  
Ի՛նչպէս թրոխ ինձ ընդ առաջ,  
Ու բոյր եւ զով ընծայելով,  
Զիս կ'ողջունես հեիզի շնչով:  
Ո՛հ, կը սիրեմ զքեզ, հոգմիկ,  
Երբ կը փութաս ինձի գալու,  
Ի պար ՚ի թռիչ, ՚ի սոյլ մեղմիկ  
Այրած ճակտիս իմ այցելու.  
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած,  
Ծիւ ծիւ բացուի ՚ի յոյս կենաց:





## ՊՈՐՏԵԶԸ

Մենք պարտեզ մ'ունինք,  
Լեցուն է հոն ծաղիկ,  
Վարդը շատ կը սիրեմ,

Ամեն օր բրցունեմ,  
 Ձեռքս առած հոտովրտամ  
 Մօրրս հետ ժուռ գամ:

Պտուղի շատ ծառեր  
 Հայրիկս է հոն տնկեր,  
 Կարմրուկ նուռ խնձոր,  
 Թուզ կեռաս ու սալոր,  
 Ամեն քն ալ քաղցր ու թարմ  
 Ուտենք նէ կառնենք համ:





## ՎԱՐԴ ԵՒ ՇՈՒՇԱՆ

Քոյր եւ եղբայր էին, իրի-  
կունները վարժարանէ ար-  
ձակուողին՝ ընթրիքէն ետ-  
քը պարտէզը կամ սրահը  
կերթային եւ զիրար գրկե-  
լով՝ քօլ<sup>+</sup> կը խաղային, հե-  
տեւեալ երգին եղանակովը  
զոր սովորած էին իրենց դա-  
սընկերներէն՝ ցորեկը զթօ-  
սանքի ժամանակ :

## ԲՈՒՔԸ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,  
Ո՛վ հեշտ բարբառ մայրական  
Փափկահնչիւն բառերուդ,  
Նման արդեօք այլ տեղ կան.  
Դու որ նախ ինձ հնչեցիր,  
Նախ սիրոյ ո՛հ հեշտ խօսքեր,  
Ոյն նախ զքեզ թո՛թովելս,  
Դեռ իմ մտքէն չէ ելեր :

Իմ մայրենի քաղցր լեզու ,  
 կեաց անսասան կեաց յաւէտ  
 կեաց միշտ լեզուդ մայրական  
 կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

Յաւերժական Ս . գրոց մէջ  
 կեաց միշտ նորէն ու նորէն ,  
 կշռեալ անուշ քու տաղերդ  
 թող ամեն սիրտ արժարժեն ,  
 Շնորհ ունել Արարչէն ,  
 կամ պէտք ըլլայ՝ աղօթել .  
 Շրթունքս սրտէ բորբոքած  
 կ'աղաղակէ անարդել :

Իմ մայրենի քաղցր լեզու ,  
 կեաց անսասան կեաց յաւէտ  
 կեաց միշտ լեզուդ մայրական  
 կեաց ծաղկալից ծաղկաւէտ :





## ԹՇՈՒՍՈՒՆ ԽՈՐՀԵՑԷՒՔ

Երբ իրիկուան խաղաղ  
 Սրտով տուն դառնաք,  
 Սեղան նրսախք, ուրախ  
 Ըլլաք ու խայտաք,  
 Եւ ձեր օրդւոցը հեշտ  
 Քգուանքը վախելէք,  
 Թշուառն խորհեցէ՛ք :  
 Երբ հանգիստ էք, ձեր  
 Սրտերը զրարթ են,

Կ'երգէք կայտուէք,  
 Զբաղմունքնիդ երգեր են,  
 Գիշերն անփոյթ եւ  
 Անդորրիկ քուն նիրհէք,  
 Թշուառն խորհեցէ՛ք:

Երբ առաւօտն գայ  
 Ողջունել, արթննաք,  
 Արփւոյն շողքը վայելու  
 Սիրտ ունենաք,  
 Անվիշտ տղու մը պէս  
 Զուարթ կը կայտուէք,  
 Թշուառն խորհեցէ՛ք:

Երբ յերկ դառնաք, քիչ  
 Շատ շահիք, գոհ ըլլաք,  
 Գրեկն անցնէք առանց  
 Վըշտի, անվրտանգ,  
 Ո՛հ, անգամ մը ձեր  
 Ուշն անոր դարձուցէ՛ք,  
 Թշուառն խորհեցէ՛ք:

Երբ գուք կ'ուտէք ու  
 կր խըմէք կուշտ ու կուռ ,  
 Ո՛հ , նա անդին կուլայ .  
 կ'ողբայ , խոկայ տխուր .  
 Հայե՛ր , հայե՛ր , գու թ  
 Ունեցէք , յիշեցէ՛ք ,  
 Թշուաուն խորհեցէ՛ք :





## ԱՂՔԱՏ ԿԻՆԸ

Յուրար փշեց, ձմեռ սաստիկ  
 Ջիւնը ծածկեց գետինը,  
 Ամենայն մարդ մտաւ իւր  
 տուն

Պատասպարուիլ ցրտիցը՝

Ժամի դռնում դողդղալով  
 Կանգնած էր մի աղքատ կին  
 Նորա հանդերձ պատառ  
 պատառ  
 Չունէր շապիկ իւր հագին՝

Անհաջմորձակ նա իւր ձեռքը  
 Պարզում է անց — գացողին,  
 Ողորմութիւն տուէք պարոն  
 Անտուն անտէր աղքատին՝

Չեղ սիրելիք, ասեմ ո՞վ է  
 Այս խղճալի աղքատը,

Այսպէս ցրտում ոտաբոսպիկ  
կանդնած ժամի դռնումը ,

Նատ ժամանակ դեռ չէ ան-

երբ նա պատուով ու փառ-  
քով ,

Ման էր գալիս փողոցներում  
իւր սեպհական կառքերով .

Այժմ զրկուած ամեն բանից  
Չունի անգամ հացի գին ,  
Ողորմութիւն արէք պարոն  
Անտուն անտէր աղքատին .

հայաւսչա





## ԱՔԱՂԱՂ

Դու ինձ ասա , աքսողաղ ,  
 Ասկի կատարիդ մատաղ ,  
 Կարմիր մօրու քիդ մատաղ ,  
 Ինչո՞ւ շուտ շուտ կարթննաս  
 Բարձր ձայնով կը պուռաս ,  
 Բակի դուռը կը թառիս  
 Քաղցր քունս խռովելո՞ւ ,  
 Օրս անհանգի՞ստ անելու :

ᲛᲠᲨᲠᲢᲣᲤᲦᲧᲨᲩᲪᲫᲬᲭᲮᲯᲰᲱᲲᲳᲴᲵᲶᲷᲸᲹᲺ᲻᲼ᲽᲾᲿ



## ԲԱՐԵՊԱՇՏ ԱԶՆԻԻԸ

Ազնիւ՝ փոքրիկ եւ սիրունիկ աղջիկ մ'էր. երբ մայրիկին հետ Եկեղեցի երթար, կարգ մը մանչերու եւ աղջկանց պէս ասդին անդին չէր վազվառէր, աղօթողները անհանգիստ չէր ըներ, այլ հանդարտ մայրիկին օրինակին հետեւելով ծունդի վերայ եկած՝ ջերմեռանդութեամբ կ'աղօթէր. Ինքը տակաւին փոքրիկ ըլլալուն, մի միայն «Հայր մեր»ը կը կրկնէր, զոր մայրիկէն ուղբած էր:

Եկեղեցիին մէջ Ազնիւը

այս վիճակին մէջ տեսնողները՝  
 կ'օրհնէին զինքը ու երանիկու-  
 տային անոր մայրիկին՝ որ ասանկ  
 բարի աղջիկ մ'ուներցեր էր՝  
 Եկեղեցիէն տուն վերադարձին,  
 Ա.գնիւ կը վազէր մեծ մայրիկին  
 ձեռքը կը պագնէր, օրհնութիւնը  
 կառնէր, եւ ետքը կերթար անոր



համար մայրիկին պատրաստած  
 ապուրը կը բերէր որ ուտէ:

Մենք ալ Ա.գնիւին օրինակին  
 հետեւելու ենք որ Աստուծոյ եւ  
 մարդկանց սիրելի ըլլանք:

այս վիճակին մէջ տեսնողները՝  
կ'օրհնէին զինքը ու երանիկու-  
տային անոր մայրիկին՝ որ ասանկ  
բարի աղջիկ մ'ունեցեր էր:

Եկեղեցիէն տուն վերադարձին,  
Ս.զնիւ կը վազէր մեծ մայրիկին  
ձևքը կը պագնէր, օրհնութիւնը  
կառնէր, եւ ետքը կերթար անոր



համար մայրիկին պատրաստած  
ապուրը կը բերէր որ ուտէ:

Մենք ալ Ս.զնիւին օրինակին  
հետեւելու ենք որ Ս.ստուծոյ եւ  
մարդկանց սիրելի ըլլանք:

Ազնիւ որ Մանկապարտէզ  
կ'երթար, հոն սովրած հետեւեալ  
երգը շատ աղւոր կ'երգէր, ձեռ-  
քի շարժումներով:

Ժամկոչ աղբարը վեր ելաւ,  
Զանգակները զարկաւ,  
Զանգակները զարկաւ,  
Զինկ, զանկ, զո՛ւնկ: Կրկնէ:

Ժամկոչ աղբարը վեր ելաւ,  
Զանգակները զարկաւ,  
Զանգակները զարկաւ,  
Բիմ, բամ, բո՛ւմ: Կրկնէ:

Ժամկոչ աղբարը վեր ելաւ,  
Զանգակները զարկաւ,  
Զանգակները զարկաւ,  
Տինկ, տանկ տո՛ւնկ: Կրկնէ:





## ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ծեր գիտնական մը՝ խոշոր գիրքերու մէջ թաղուած, իւր աշխատութեան սենեկին մէջ նրատեր էր, ուր կրակարանը կը բորբոքէր փայտի հաստ կոճղեր։ Յանկարծ սենեակին դուռը կը զարնուի, եւ գիտնականին «մտէք» հրամանին վրայ ամենաանմեղ եւ ամենապարզ փոքր աղջիկ մը ներս կը մտնէ։

— Պարոն գիտնական, կըսէ աղջիկը, մօրս կողմանէ կուգամ խնդրել ձեռնէ քիչ մը կրակ, որպէս զի մեր կրակարանը արծարծ ենք։

— Սիրով կուտամ, սիրելի՛ դուստր, բայց կրակը դնելու աման մը ունի՞ս։

— Ահա՛ ձեռքս, կըսէ աղջիկը։

— Բայց ձեռքդ կայրի։

— Ո՛հ, ո՛չ։

—Բայց ի՞նչպէս կրնայ ըլլալ:

—Տեսէ՛ք, այսպէս կրնեմ եւ  
ամենեւին վտանգ չկայ, ըսաւ  
աղջիկն, ու կրակարանին առջեւ  
ծռելով ձախ ձեռքին մէջ մոխիր  
լեցուց եւ վրան մէկ քանի վառ  
ածուխ դրաւ, եւ յետոյ ոտք ել-  
նելով յապուշ կրթեալ ծերունւոյն  
խոնարհութիւն մը ընելով «շնոր-  
հակալ եմ պարոն գիտնական»  
ըսաւ եւ ամենայն հանդարտու-  
թեամբ դուրս ելաւ: Յայնժամ  
գիտնականն իրեն դէմ եզականա-  
պէս զայրացեալ՝ ձակաին զար-  
նելով «անա չգիտցած մէկ քանս  
ալ որ սոյն տգէտ աղջիկը սով-  
րեցուց ինձ. ո՛հ, գիտութիւն,  
գիտութիւն, պաշտելի ես դու»  
ըսաւ եւ նորէն սկսաւ ուսում-  
նասիրել:



## ԿԵՂԾ ՏՕԳԹՕՌԸ

Սուկրատ փիլիսոփայն, որ  
 բժշկութեան մէջ ալ հռչակաւոր  
 էր, իւր բնակութիւնը 'ի Կղզի  
 փոխադրելէն ետքն ալ իրեն օգ-  
 նութեանը կարօտ հիւանդները  
 կը խնամէր: Մէկ քանի տարի  
 առաջ կինը մեռած ըլլալուն, իւր  
 երկու փոքրիկ զաւկները կը մը-  
 խիթարէին զինքը: Այս երկուքը  
 երբեմն իրենց փոքրիկ խաղալիկ  
 կառքերնին զղեկին ճեմագաւթին  
 մէջ կը քաշէին. եւ երբ կը յոգ-  
 նէին, անտառին վրայնայող պա-  
 տուհանէ մը մտիկ կընէին թռչ-  
 նոց երգերը:

Օր մը Սուկրատ երբ ըստ  
 սովորութեան հիւանդի մը այցե-  
 լութեան երթալու համար գա-  
 լազան 'ի ձեռին եւ ակնոցն 'ի  
 թիթ կը պատրաստուէր տունէն

մեկնիլ, ահա դու որ զարնուեցաւ.  
տղան վազեց դու որ բացաւ եւ  
դիմաւորեց մուրացիկ կին մը,  
որուն զիրկը մանկիկ մը կար:

— Զաւակս, ըսաւ կինը բժըշ-  
կին տղուն. հայրիկդ հո՞ս է:

Բժիշկը որ այն միջոցին ար-  
ղուն ետեւէն հասեր էր, — Հոս  
եմ, ի՞նչ կուզէք տիկին. հարցուց  
անհամբեր:

— Ա՛հ, տէր իմ, զաւակս հի-  
ւանդ է. մրմնջեց խեղճ կինը:

Այս խօսքերուն ի սլատաս-  
խանի, բժշկին տղան, որ հօրը  
ունեցած մխիթարիչ զգացումէն  
ինքն ալ ունէր, ըսաւ.

— Բան չ'կայ տիկին անհոգ  
եղիր, հիմա հայրիկս դեղ մը  
կուտայ կանցնի:

Նոյն միջոցին փոքրիկ աղ-  
ջիկը որ ասոնց քով հասեր էր,  
մանկանց յատուկ գորովալից ըզ-  
գացումով մը յարեց.

— Խեղճ փոքրիկ:

Բժիշկը անմիջապէս խոհուն գէմքով ժամացոյցը բացաւ եւ հիւանդ մանկան բազկերակը ըսկսաւ զննել: Բժիշկին տղայն ալ հօրը ձեւերուն խիստ ուշադրութիւն կընէր. իսկ քոյրը՝ կատուն գրկած կը շոյէր:

Չերկարենք, կինը բժիշկին տուած զեղագիրը եւ անոր մէկ քանի պատուէրները առնելէն հետքը հեռացաւ. տօգթօնն ալ տունէն մեկնեցաւ:

Տղայք նորէն սկսան իրենց խաղին. մանչը իւր փայտէ ձին կը քաշէր, աղջիկն ալ կատուն կը շոյէր:

Քանի մը վայրկեան անցնելէ հետքը կատուն տան սպասուհւոյն ձեռքը բռնած մտի կտորը տեսնելուն պէս՝ աղջկան գրկէն դուրս դատկեց եւ կառքին զարնուե-

լով, զայն տապալեց. ասոր վրայ  
 եղբայրը կատուին վրան վազելով  
 թոնեց զայն եւ լաւ մը ծեծեց.  
 կատուն սկսաւ մլաւել, իբր թէ  
 բրածին համար ներողութիւն կը  
 խնդրէր: կատուին մլաւ ձայնը  
 փոքրիկ աղջկան սրտին դպաւ,  
 աճապարեց զայն եղբօրը ձեռքէն  
 ազատել, եւ աթոռի մը վրայ  
 դնելէն ետքը, արտասուելից ա-  
 չօք. «հիմա ի՞նչ պիտի ընեմք,»  
 ըսաւ:

Եղբայրը քրոջն արցունքները  
 տեսնելով, գղջաց բրածին վրայ,  
 եւ «բան մը կընենք,» ըսելով վերի  
 յարկը ելաւ, հօրը գիշերային գըլ-  
 խարկը գլուխն անցուց, անոր  
 խոշոր այլ հին մէկ ակնոցը քիթը  
 դրաւ, մեծ մօրմէն գրպանին ժա-  
 մացոյցը առաւ եւ վար իջնելով,  
 աչքը ժամացոյցին վրայ կատու-  
 ին բազկերակը սկսաւ զննել:

Քոյրիկը, որ կատուն զիրկը  
առած նստեր էր, մխիթարական  
այլ խորհրդաւոր նայուածքով մը  
բոաւ կեղծ ասօլթօսին. «Հիւանդ-  
նիս այնչափ ծանր չէ, քիչ մը  
միս տալու է:


— Նախ եւ առաջ քիչ մը կաթ,  
որ սիրաը հանդարտի, ետքն ալ  
մօի կտոր մը:

Նոյն պահուն հայրերնին  
վերադարձաւ, եւ սպասուհիէն  
իմանալով տղոց ըրածը, խկոյն  
վազեց երկուքն ալ գրկեց եւ  
համբուրեց, ըսելով.

— Չաւանկս, դու առ սէր մարդ-  
կու թեան ծառայելով հիւանդաց  
օգնութեան հասնող բժիշկ մը,  
դու ալ, աղջիկս, գուրգուրանօք  
եւ գթոտ սրտով զաւակներ մեծ-  
ցնող մայր մը պիտի ըլլաս:

Բարոյական. — Տղաք սովորաբար  
կ'օրինակեն իրենց շուրջը եղող-

ներուն բարի կամ չար գործե-  
 րը. ուրեմն եղբայրներ ու քոյ-  
 րեր, զգուշացէք միշտ չար օրի-  
 նակ ըլլալէ ձեր կրտսերներուն,  
 որովհետև օրինակի ազդեցու-  
 թիւնը խիստ մեծ է անոնց մըւ-  
 քին ու սրտին վրայ:





## ՉԱՐԿՃՃԻ ՏԴՍՆ

Անգամ մը Ս. մերիկացի պարոն մը սեւամորթ խոհարարուհի մը բռնած էր. այս կինը ունէր 5 տարեկան փոքրիկ՝ այլ չարաճճի մանչ զաւակ մը, զոր ստիպուած էր քովը պահել՝ հարը մեռած ըլլալով աշխարհիս երեօր իրմէ զատ մէկը չունենալուն պատճառաւ:

Օր մը մայրը մածղին (հահաւեպի) եփելով, կաթսան կրակին վրայէն վար կ'առնէ ու խոհանոցին քովիկը գտնուած մառանը տանելով սեղանի մը վրայ կը դնէ, որպէս զի քիչ մը հանգչի. յետոյ խոհանոցը իւր ուրիշ մէկ գործին կը վերադառ-

նայ, Չարաճճի տղան միջոց  
 մը գտնելով կամացուկ մը  
 մառանը կը մանէ, եւ որով-  
 հետեւ շատ կը սիրէր այդ  
 աղւոր կաթնեղէնը, հոտէն  
 հրապուրուած՝ մէկէն կաթ-  
 սային կը մօտենայ, պա-  
 րունակութիւնը լափելու  
 որկրամուտութեամբ, բայց իր  
 հասակը խիստ փոքր ըլլալուն  
 կաթսային բերնին չէր կըր-  
 նար հասնիլ, ուստի ճարա-  
 հատեալ կը ծռէ զայն. սա-  
 կայն անօթը կորսնցնելով  
 իւր հաւասարակշռութիւնը  
 շարաճճիին գլուխը կ'անցի,  
 որով մարմինը կէս մը այրե-  
 լով սոսկալի ցաւեր կը պատ-  
 ճառէ անոր: Մայրը լսելով  
 տղուն ճիչերը, օգնութեան

կը փուլթայ եւ կ'ազատէ  
զայն կաթսային տակէն .

\*  
\*\*

Արդ սիրուն մանուկներ ,  
պէտք է ձեր ծնողքն ու դաս  
տիարակները յարգէք , միշտ  
հնազանդ ըլլաք անոնց , որ-  
պէս զի վերոյիշեալ չարա-  
ճճիին պէս փորձու թեան մը  
չի հանգիպիք . լաւ մտքեր  
նիդ պահեցէք անսնց բարի  
խրատները որ մեղրէն աւե-  
լի անուշ են . սիրեցէ՛ք գըր-  
քերն եւ ընթերցումը՝ շա-  
քարէն ա՛լ աւելի , եւ միշտ  
շնորհակալ եղէք Աստուծոյ  
որ ձեզի պարգեւած է բարի  
հայրեր եւ մայրեր :




## ԵՐԿՈՒ ԸՍՏԱ.ՀԱԿՆԵՐ

Սա մեծ պատկերը մեզի կը ներկայացնէ երկու փոքրիկ ըստահակներ, որոնք փողոցին մէջտեղը նստած ծխել կը փորձեն:

Ասոնք տունէն կանուխ մեկնած են վարժարան երթալու համար. բայց չար միտում մը կը հեռացնէ զիրենք վարժարանի ճամբէն. կը սկսին հոս հոն թափառելով ժամավաճառ ըլլալ, եւ հիմա ալ կօշիկնին հանած, սրիկաներու պէս փողոցը նստած են ու գեանէն գտնուած աղտոտ պլանիկները բերաննին առած կը ծխեն:

Տեսէք այն փոքրիկ չարածնին որ քիթը բերանը ծամածռելով կը փորձէ ձեռքը պտնուած սիկառը վառել իր ըստահակ ընկերոջը զլանիկէն:














Ո՛րչափ ալ անխնամ հազուած են.  
կեղտոտ ու պատրուած. աղքա-  
տութենէ աւելի անշուշտ ծու-  
լութեան արդիւնք է այդ:

Ո՛հ, քանի՛ ջաւալի է այդ  
փոքրիկ ըստահակներու վիճակը,  
անոնք հետզհետէ աւելի չար ու-  
նակութիւններու պիտի սովորին,  
ու գերի ըլլան անոնց, եւ երբ  
մեծնան, աւելի գարշելի արա-  
րածներ պիտի ըլլան: Աննշան  
զանցառութիւններ ու փոքրիկ  
չարութիւններ վերջէն շատ մը  
տողոց կորսուելուն պատճառ ե-  
ղած են: Երբ անգամ մը չարու-  
թիւնը արմատ ձգէ մանուկնե-  
րու մատաղ սրտին մէջ, դժուար  
կըլլայ ջնջել յետոյ. ուստի, չար  
ունակութիւններէ զգուշացէ՛ք,  
փոքրիկ ընթերցողներ:



## ՄԱՆՈՒՇԱԿԸ

Փոքրիկն վահրամ այնպէս  
 կը կարծէր թէ մի միայն կա-  
 պոյտ մանուշակ կըլլայ. որ մը  
 պարտէզին մէջ ձիւնի պէս ճեր-  
 մակ մանուշակ տեսաւ, ինչպէս  
 նաեւ կարմիր՝ կրակի պէս, որ  
 առաւօտեան արեգակին ճառա-  
 գայթներէն կը ցոլար. ուստի այս  
 երեք տեսակէն մէյմէկ հատ քա-  
 ղեց եւ մօրը տարաւ, հազուա-

գիւտ բան մը ըրածի պէս պար-  
ծենալով:

— Բայց, ըսաւ մայրիկը, թէ եւ  
այս 3 տեսակները գիտցածիդ  
չափ հազուադիւտ չեն, բայց եւ  
այնպէս պէտք է գիտնաս անոնց  
նշանակութիւնը որ երջանիկ  
գիւտ մ է Պարզ կապոյտ մանու-  
շակը համեստութեան եւ պար-  
կեշտութեան, սպիտակը՝ քաղց-  
րութեան եւ անմեղութեան, իսկ  
կարմիրը՝ եռանդալից սիրոյ առ  
ծնողքն, առ ճշմարիտն եւ առ  
լաւագոյնն:»



## ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

—

ԴԵՂԶԱՆԻԿԸ ՎԱՆԴԱԿԻՆ  
ՄԷՋՆ Է

Այցաքարտ մը գտէք, կամ  
 եթէ չգտնաք՝ նոյն ձեւով կտրե-  
 ցէք խաւաքարտ (մութաւա) մը  
 ու գայն դեղձանիկին ու վանդա-  
 կին մէջտեղը գտնուած երկայն  
 գծին վրայ դրէք ուղղահայեաց

կերպով. յետոյ դիտեցէք դեղ-  
 ձանիկն սւ վանդակը, առանց  
 աչքերնիդ ձախ կամ աջ կողմ  
 շարժելու. պիտի տեսնէք թէ  
 դեղձանիկը վանդակին մէջ կը  
 մտնէ: Ուշադրութիւն ընելու է  
 որ դիտելու ատեն քիթերնուդ  
 ծայրը այցաքարտին եղերքին  
 կցուած ըլլայ:



ԹՈՒՂԹԻՆ ՎՐԱՅ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԿԸ ԴՅՈՒՆԱՆ

Սոյն զուարճալի փորձը կատարելու համար այս գիրքը սեղանի մը վրայ դրէք եւ աջ ձեռքերնուդ միջամատը՝ պատկերին մէջի ճերմակ միջոցին վրայ դնելով՝ ձախ ձեռքովնիդ ալ գրքին ասդ իի կողմը բռնելով՝ գիրքը շրջանակաձեւ երեքցուցէք, առանց աչքերնիդ այն շրջանակներուն վրայէն վերցնելու. պիտի տեսնէք որ շրջանակները կը դառնան, ու որչափ որ արագարար շարժէք՝ շրջանակներն ալ այնչափ շուտ կը դառնան. Ահաւասիկ տեսողութեան պատրանքի զուարճալի մէկ փորձը:







# ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Ա.

Թըռչուն մ'եմ անթեւ,  
 Թըռչրախմ թեթեւ.  
 Հասակս է պարթեւ  
 Զուրեքու եմ դեւ:

Բ.

Հեռուանց կուգայ կլոր փաթտո-  
 ցիկ  
 Իրան փաթտոցիկ է, ի՞նչ է,  
 Կարդալ չգիտէ՝ գիր կը գրէ,  
 Այս ի՞նչ սևասկ գրագիր է.  
 Տունն որ այրի՝ խաղ կը կանչէ,  
 Խենթ չէ ըսես, հապա ի՞նչ է:

Գ.

Թռչունին պէս չունիմ թեւ,  
 Բայց թռչիլս է խիստ թեթեւ.  
 Կրնամ մրցիլ արծուին հետ  
 Լինիմ թ'ամպոց մէջ անհետ.  
 Շանթերն ինձմէ խոյս կուտան

Երկինք անշուշտ ինձ գրթան.  
 Ս'հ, ձիւն, անձրեւ կամ կարկուտ  
 Փոթորկին չափ չեն անդուլթ.  
 Երբ սուրալով սեւ ամպեր  
 Խուժեն վրաս անհամբեր,  
 Մահս մօտ է, բարեկամ  
 Վայ ինձ, վայ ինձ, բիւր անգամ,

Դ.

Հեռուանց կուգայ յարլորլալէն,  
 Ոսկի պեխով պրլպրլալէն,  
 Ով որ չառնէ անկէ վաճառ՝  
 Խաւար մնայ, եւ զուրկ համէն:

Հանելուկներուն լուծումները  
 այս գրքոյկին մէջի պզտիկ պատ-  
 կերներուն մէջ փնտռելու է:

## ԾԻԾԱՂ

Քահանայն կը հարցնէ .  
— Երախայօ ի՞նչ խնդրէ :

Կնկահայրն 10 տարեկան  
կը մտնայ տալիք պատաս-  
խանը , որովհետեւ նոյն մի-  
ջոցին մանուկը գրկին մէջ  
սուր ճիչեր արձակելուն՝  
դարմացած անոր կը նախ .

Քահանայն կը կրկնէ իւր  
հարցումը . — Երախայօ ի՞նչ  
խնդրէ .

Փոքրիկ կնքահայրը՝ շփո-  
թած — Մայրիկին ծի՛ծը . . .

\*  
\* \*

Մայրիկ մը իւր աղջկանը .  
— Նուարդ , ամեն օր հա-  
մար կառնե՞ս կոր ,

- Այո՛ , մայրիկս .
- Մայրենի լեզուդ կէս ըրի՞ր
- Լմացուցի պիլէ ,
- Ուրեմն բե՛ր մէյ մը նայիմ .
- Ի՞նչ պիտի նայիս , բսօրը  
պիլէ չի մնաց :

—

Թուարան մը իր աշակերտայր .

— Պարօննե՛ր , ձեզմէ ութը հոգիին եթէ 48 խնձոր , 32 Տանձ , 64 Սալոր և 76 Շագանակ բաժնեմ , իւրաքանչիւրիդ ի՞նչ տուած կըլլամ .

Ուշիմ աշակերտ մը — Փորիցաւ :

Հաղարոս, 10էն 10ը հանեա  
նէ ի՞նչ կը մնայ .

— . . . .

— Ըսէ, տեսնեմ, շուտ

— . . . .

— Մի՛ շուարիւր, պատաս-  
խանէ՛, դոր օրինակ, ըսենք  
թէ հայրիկդ քեզի տասը  
դուրուշ տուած ըլլայ, դուն  
ալ ամենը մէկէն ձգած կոր-  
նցուցած ըլլաս, ա՛ն ատեն  
գրպանիդ մէջ ի՞նչ կը մնայ .

— Ծակ մը .

Հայր մը իւր որդւոյն .

— Ձե՞ս խպնիւր, չես՞ ամըշ-  
նար, գարշելի .

— Ի՞նչ կայ որ, հայրիկ .

— Ի՞նչ պիտի ըլլայ, այս  
տարուան առած վկայա-  
կանդ աղէկ չէ, գէշ նօթեր  
առեր ես, անպիտան .

— Էյ ի՞նչ ընեմ, գրողը  
ես չեմ եա, վարժապետս  
է . իշթէ գիրս բի՛ է, ինձի  
ձգեր նէ՛ տեսնայիր ի՞նչ աղ-  
ւոր կը գրէի .



3/13/21





BB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM1410\***

255.07.02.01.06.00/

BB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM1410\***

255.07.02.01.06.00/

ԳԻՆ

ՄԱԶՄԵՍԼ 2 ՂՐԵ

ԹՂԹՍԿԱԶՄ 60 ՓՐՅ.

معارف نظارتك وخصتيله